ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները, այսուհետ՝ մասնակից պետություններ, հիմք ընդունելով 1992 թվականի փետրվարի 14-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջեւ զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական եւ իրավական երաշխիքների մասին եւ 1992 թվականի մարտի 13-ի՝ Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին Համաձայնագրերը,

ցանկություն արտահայտելով համագործակցելու զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց եւ նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության բնագավառում, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Համագործակցության մասնակից պետությունների Զինված ուժերի եւ այդ պետությունների օրենսդիր մարմինների ստեղծած այլ ռազմական կազմավորումների, Համագործակցության միացյալ զինված ուժերի, ԽՍՀՄ նախկին Զինված ուժեր եւ այլ զինված կազմավորումների զինծառայողների կենսաթոշակային ապահովությունը եւ պետական պարտադիր ապահովագրությունը, ինչպես նաեւ այդ զինծառայողների ընտանիքների կենսաթոշակային ապահովությունը իրականացվում են այն մասնակից պետությունների օրենսդրությամբ սահմանված կամ սահմանվող պայմաններով, նորմերով եւ կարգով, որոնց տարածքներում բնակվում են նշված զինծառայողները եւ նրանց ընտանիքները, իսկ մինչ տվյալ հարցերով այդ պետությունների կողմից օրենսդրական ակտերի ընդունումը՝ նախկին ԽՍՀՄ օրենսդրությամբ սահմանված պայմաններով, նորմերով եւ կարգով: Ընդ որում զինծառայողների եւ նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության մակարդակը, որը հաստատվում է մասնակից պետությունների օրենսդրություններով՝ համաձայն 1992 թվականի փետրվարի 14-ի՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջեւ զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց եւ նրանց ընտանիքների անդամների սոցիալական եւ իրավական երաշխիքների մասին Համաձայնագրի, չի կարող ավելի ցածր լինել քան ԽՍՀՄ օրենսդրությամբ եւ այլ նորմատիվ ակտերով ավելի վաղ հաստատված մակարդակը:

ՀՈԴՎԱԾ 2

Զինծառայողների կենսաթոշակների նշանակման տարիների վաստակին հաշվարկվում է սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված Զինված ուժերում եւ այլ զինված կազմավորումներում ծառայությունը (այդ թվում արտոնյալ պայմաններով) Համագործակցության այն մասնակից պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, որոնց տարածքում զինծառայողները անցել են ծառայությունը:

Զինծառայողներին եւ նրանց ընտանիքներին թոշակների նշանակման համար դրամական դրույքաչափերը սահմանվում են այն մասնակից պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով, որոնց տարածքներում բնակվում են զինծառայողները եւ նրանց ընտանիքները:

ՀՈԴՎԱԾ 3

Զինծառայողների եւ նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության եւ զինծառայողների պարտադիր պետական ապահովագրության վրա կատարվող ծախսերը

իրականացվում են մասնակից պետությունների կողմից իրենց բյուջեների հաշվին՝ առանց փոխադարձ հաշվարկների:

ՀՈԴՎԱԾ 4

Մասնակից պետությունները պարտավորություն են վերցնում տեղեկություն փոխանակել իրենց պետությունում զինծառայողների եւ նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության եւ զինծառայողների պետական պարտադիր ապահովագրության մասին համաձայնեցված օրենսդրական ակտերի հիման վրա ընդունված գործող նորմատիվ փաստաթղթերի մասին, ինչպես նաեւ իրականացնել մշտական համագործակցություն կենսաթոշակային ապահովության եւ պետական պարտադիր ապահովագրության հարցերի ժամանակին եւ ճիշտ լուծման համար կարեւորություն ունեցող պարտավորությունները պարզելու համար:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագրի կիրառման հետ կապված հարցերը, անհրաժեշտության դեպքում, երկկողմ եւ բազմակողմ հիմունքներով կքննարկվեն մասնակից պետությունների պաշտպանության նախարարների Խորհրդի, ինչպես նաեւ Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանության նախարարությունների (պաշտպանության կոմիտեների) կողմից:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կատարված է Տաշքենդ քաղաքում 1992 թվականի մայիսի 15-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվներում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մայիսի 15-ից: